


6791

Twelve Spur



T-1929

ԲԱՆԳ. - ԳՅՈՒԴ. ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ

№ 17

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 17

891.542-3
12-92
Ար.

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ



2011

529

ՊՐԵՄԻԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՆՐԱԴՐԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՆՐԱԴՐԱՄ

Հր. № 947. Գրառեպվար № 1736 (բ). Տիրաժ 2000
Թեսչրատի առաջին տպարան Վաղարշապատում
Պատվեր № 49

ՀԱՅՈՒ ԲԱՐ

ՅԵՎՐՈՊԱՑԻՆ

1.

Ալլահվերդու գործարանի ծխնելուցզն առաջ
վստվա բացվող լույսի մեջ սկսում ե ավելի և
ավելի վորոշ լերեալ: Ելեկտրական լամպերն
սկսում են ավելի դժգունանալ:

Լույսը բացվում ե:

Դեբետը խշալով անցնում ե և ելի գալիս
ե խշալով և ելի անցնում ե: Ծառերը, վոր
թեքված են նրա ջրերի վրա՝ դանդաղ որորվում
են և նրանց որորվող պատկերն ե բեկրեկվում
հոսող ջրերի կոհակների մեջ:

Բացվում ե լույսը:

Զորում թարմությունն կա ու զով կա: Անտառապատ լանջերը ձգվում են լերկար և վոլորապտուտ են ձգվում: Յերբ մեկը ճորի ուղղությամբ նայում ե, նրա հայացքը գնում ե անկանգ, ճորի առաջին վոլորն անցնում ե, լերկը ըորդն անցնում ե, լերը ըորդն ե անցնում և գնում ե ելի: Իսկ ճորը գեռ բաց դաշտ զուրս չի գալիս: Հեռու լե գաշտը, վոր բաց ե, և լերկար ե ճորն իր անտառապատ լանջերով ու Դեբետով:

Զորում թարմություն ու զով կա և բացվող
առավոտ:

Գործարանի պահակը ծեր ե: Նա հորանջում
ե: Իրենից անկախ՝ ձեռքը բարձրացնում և խա-
չակնքել ե ուզում: Բայց շարժումը մեռնում ե
ճակատի վրա: Պահակը քորում ե ճակատն ու
ձեռքը վար ե իջեցնում:

Բանվորական շենքի լուսամուտներից մեկից
մի մարդ իր գլուխն ե զուրս հանում: Ճմուռմ ե
ճպուտ աշքերը և գլուխը նորից ներս ե ծծվում
սենյակի մթության մեջ: Մի ուրիշ զլուխ ե զուրս
կախվում մի ուրիշ լուսամուտից և թևերը ժի-
լեան են հագնում: Յերկրորդ հարկի լուսամուտ-
ներից մեկի յետեռում մեկը կանգնել ե և սրբի-
չով յերեսն ե չորացնում:

Մի դուռ չխկում ե: Դոնից զուրս ե գալիս
«Յեվրոպացին» և առաջանում ե դեպի գետը:
Ուսի սրբիչն ու սապոնը մի կողմ ե դնում,
պլպում, յերկու ձեռքով վերցնում ե մի քիչ Դե-
բետ ու լվացվում ե:

«Յեվրոպացին» այդպես ե սիրում լվացվել:
Գործարանի բոլոր բանվորներին ծանոթ ե նրա
սովորությունը:

— Յես, — ասում ե «Յեվրոպացին», — ենտեղ
ենքան եմ լվացվել նեղ փողոցի աղքատիկ տան-
ժանգոտ լվացարանի ջրով, վոր ճանձրացել եմ:

Դեբետը, և այս առավոտը՝ վոր բացվում ե, և
խշացող ծառերը, — լավ են, — ասում ե «Յեվրո-
պացին»:

Նա սրբիչով մաքրում չորացնում ե գեմքը
և կանգնում ե: Նա սպասում ե: Իրոք, մի բոպե
հետո, ուժեղ սուլոց ե լսվում, և, ձորի վերջին
վոլորտն անցնելով, գործարանին ե մոտենում և
իր ճանապարհով գնում ե գնացքը: Նա անցնում
և առաջին վոլորտը և անհետանում ե:

«Յեվրոպացին» վերադառնում ե իր բնա-
կարանը: Նա արդեն վերջացրել ե լվացվելը:

Նորից ե սուլում և այս անգամ սուլողը գոր-
ծարանի շաբան ե: Լոռում ե շշակը, իսկ նրա
ձայնը դեռ ինչքան հեռու յե տարածվում և տա-
րածվում ե ինչքան լայն ու խորը: Բանվորները
գնում են գործարան, և աշխատանքալին որն
սկսվում ե:

2.

Ծառերն են: Ծառերի տակ հողն ե: Հողի
տակ մարդիկ են:

Այդպես ե:

Հողի հետ խառը՝ մի մետաղ կա, վոր գեղին
ե, ինչպես արեն ե ղեղին: Դա պղինձն ե: Իջել
են բանվորները պղնձի մոտ ու քանդում են:

Մուրճերը յերգում են նրանց ձեռքերում և

մուրճերը փորում են: Ահա մեկը պառկել և
մեջքի վրա և պղնձախառ առաստաղն ե քան-
դում: Իսկ մուրճը յերգում ե:

— Յես,—ասում ե մուրճը, —ահա քանդում
եմ, և պղինձն ուրախ ե զրա համար: Յես քան-
դում եմ պղինձը և կուտեր եմ անում: Կոտ
ստորերկրյա վագոնը և կտանի: Իսկ այստեղ,
քաղաքներից մեկի փողոցներից մեկում մի նոր
շենք կբարձրանա:

... Դա պղինձն ե:

— Պղինձը, —ասում ե մուրճը, —գնում ե
գործարան: Նա այստեղ կմշակվի և կզալի: Իսկ
յես կուղարկեմ նոր կյուտեր: Յեվ այստեղ, մի
գյուղում, գյուղացին պանիր կունենա իր հացի
վրա գնելու:

... Դա պղինձն ե:

— Պղնձի պես պղնձագույն են արեից կիզ-
ված լանջերն ու դաշտերը Սարդարաբադի անա-
պատում և ուրիշ ինչքան տեղերում: Պղնձագույ-
նը կանհետանա այդ տեղերից և լանջերն ու
դաշտերը կանաչ կհագնեն:

... Դա պղինձն ե:

Մարդիկ են: Մարդկանց վերեսում հողն ե:
Հողի վրա՝ ծառերը:

Այդպես ե:

Ծառերի տեղ վաղը դործարան կկանգնի և

շենքեր կկանգնեն: Հիմի կանաչագույն են այդ
տեղերը: Իսկ վաղը նրանք պղնձագույն կդառ-
նան ու կդառնան մեծածավալ քաղաք:

... Դա յել ե պղինձը...

Մուրճերը յերգում են և նրանք գտնվում են
մկանութ ձեռքերում: Դա նշանակում ե, վոր
մուրճերը դադար չեն առնի: Յեթե դադար առ-
նեն, պղինձ չի լինի և կլոր յերգը: Բայց դա-
դար չեն առնի:

Մուրճերն իրենք-իրենց չեն յերգում: Յեր-
գը հոսում ե:

Նա հոսում ե ուղեղից, սրտից, արյան յու-
րաքանչյուր յերակից ե հոսում, անցնում և մկան-
ների միջով և համուսմ ե մուրճին, գնդում
ե նրա մետաղի հետ:

Այդպես ե լինում, վոր յերգում են մուր-
ճերը:

4.

Ներքեսում գործարանն ե. —պղնձածուլարանը:
Այստեղ ե, վոր զտվում ե պղինձը և դառնում ե
մաքուր—դեղին: Յեվ այստեղ ե, վոր պղնձի
միջից զատում են փոքրաքանակ վոսկին:

«Յեվրոպացին» աշխատում ե այստեղ:

Նա վմբառեղացի յե կամ ի՞նչ աղգից: Վոչ-
վոք չգիտի:

Ի՞նչ ե նրա անունը: Վոչ-վոքի հայտնի չե:

Մի որ նա յեկավ Ալլահվերդի և պղնձաձուլարանի վարպետ գարձավ։ Իսկ հետեւալ որվանից նա դարձավ բանվորների սիրելին։ Բանվորները նրան մկրտեցին «Յեվրոպացի» անունով և նա ալդպես ել մնաց։

Ահա նա աշխատում է, և ահա նրա քառասուն տարեկան դեմքը պղնձագույն է։ Հնոցի կը ակից ե ալդպես, թե բնականից։ Զգիտես։ Նունիսկ չգիտես, թե հալվող պղինձն ե իր գույնն արտացոլել նրա դեմքի վրա, թե դեմքը՝ հալված պղնձի։

Ալդպես ե «Յեվրոպացին»։

— Յեվրոպացի, դու լավ վարպետ ես, — ասում ե Ֆի բանվոր։ Ել վճրտեղ ես աշխատել դու։

— Ել վճրտեղ չեմ աշխատել յիս, պատախանում ե «Յեվրոպացին»։ Յես, գիտե՞ք, շատ եմ աշխատել։ Քսանմեկ տարի։

— Դու ինչո՞ւ յեկար, Յեվրոպացի։

Նա չի ուզում պատասխանել։ «Յեկա, ելի», քը թմնջում ե քթի տակ, բայց հետո փոխում ե մտադրությունը։

— Կպատմեմ, կպատմեմ, — ասում ե, — մի որ։

— Հիմա պատմիր, ելի։

— Ի՞նչը։ Դե, այսպես եր, Տասնինն և կես տարի աշխատեցի։ Տասնիներորդ տարին նույնքան վատ եր, վորքան և առաջինը, կիննս։ Յեր-

կու յերեխա։ Բայց հետո՝ կոժունիստների պրոպագանդան։ Գործադուլ յեղավ։

— Հետո։

— Բանացից վոր դուրս յելա, գնում եմ, ասացի։ Ասացի՝ զնում եմ իմ իսկական հալրենիքը, — բանվորներինը։ Թեզ փող կուղարկեմ, ասացի կնոջս։ Իսկ հետո, կտեսնենք։ Կամ դու ինձ մոտ, կամ յես՝ քու նա լուցկու գործարանում ե աշխատում։ Ֆոսֆոր։ Գիտե՞ք, թունավոր ե դա։

Նորից ե հարցնում բանվորը։

— Քաղաքը մեծ եր, Գործարանը...

«Յեվրոպացին» նայում ե նրան և լուռ հասկացնում ե, վոր մեծ, շատ մեծ եր քաղաքը, նաև գործարանը։

Յերկումն ել լուռմ են։

Մի ուրիշ անգամ մի ուրիշ հարցնում ե։

— Զես ձանձրանում այստեղ, Յեվրոպացի։

«Յեվրոպացին» նայում ե նրան և լուռ հասկացնում ե, թե դու դեռ շատ ջանել ես և քիչ բան գիտես։

— Ինչո՞ւ պիտի ձանձրանամ, — շարունակում ե նա բարձրածան։

— Ո՞վ գիտե .. փոքր, մի ծխնելույզ, ձորը... իսկ այնտեղ...

— Սա իմ հալրենիքն ե, և մերն ե գործա-

ըանը։ Մենք կընդարձակենք։ Կընդարձակենք, ասում եմ։ Յեվ դա՝ հոգուտ մեզ կլինի։ Այնտեղ մենք խտալական գործադուլ ելինք անում։ Գիտե՞ս ինչ բան ե դա։ Այս այսպես։ Դու, ասենք թե, այս պղնձի վրա գորում ես՝ յերրորդ տեսակ։ Իսկ նա յերկըրդ տեսակի յէ։ Տուժում ե գործարանը… Կամ թե չե, որեկան մի պղնձաթերթ ես պատրաստում։ Դու լսում ես, միայն մի պղնձաթերթ։ Դա ծիծաղելի յէ, չե, բայց գործարանատերն, իհարկե, չի ծիծաղի…

Լոռում ե «Յեվոպացին»։ Իսկ քիչ հետո ավելացնում ե.

— Բաս, այսպիսի բաներ…

4.

Զորում վերջալույս ե։ Արեն այնքան շուտ և թեքվում սարերից այն կողմ։ Յերկնքի վրա դեռ նրա շողերն են յերեսում, իսկ ներքեսում՝ մոխրագույն մութն ե։ Ծառերի տակ խավար և արդեն, և արդեն չղջիկներն իրենց թևերն են թափահարում։ Իսկ փայտփորիկը դեռ փորում ե…

Թեև դեռ լույս ե, բայց ելեկտրական լապտերներն արդեն վառվում են գործարանի մոտերքում։ Բանվորները նստել են իրենց շենքերի մոտ կամ գետի ափին և խոսում են։ Ծխում են ել «Յեվոպացին» նստել ե մի ծառի տակ,

նայում ե ձորի յերկանքով, իր յեվոպական չի-
բուխն ե ծխում ու մտածում ե։

— Այ, — մտածում ե նա. — ձորը խավար հա-
գավ։ Ծառերն իրար յեկան, մոտեցան, մոտե-
ցան ու դարձան մի անբաժանելի, մուգ-կանաչ
զանգված…

— Այս ձորն ե և այս՝ ձորի վոլորապտույ-
տը։ Նրանից այն կողմ նորից ձորն ե, և այդ-
պես։ Այս մի քիչ տեղում ելեկտրական լուսավո-
րություն կա, նրանից այն կողմ լուսավորու-
թյուն չկա, և այդպես։

— Նայում եմ և ինչ։ Թվում ե, թե ծառե-
րի վրայից լամպեր պիտի կախված լինեն և հան-
կարծ ելեկտրական պիտի փայլի լուսը։ Զորը
պիտի լուսավորվի…

— Գետնի տակ փորում են։ Հիմա, յերբ
յերեկո յե, հիմա յել են փորում։ Անընդհատ
պղինձ են հանում և հանում են։ Պղինձը պղինձ
կծնի և գործարանը՝ գործարան։ Այդպես կլինի…

— Կրակեցին գործադուլավորների վրա։
Ալբերտն ու Շացկոն վիրավորվեցին։ Հիստերիկ
ճշում եր Ալիսան… Ինչեր յեղան։ Զերբակալե-
ցին։ Ծեծեցին։ Իսկ իրենք յերգում ելին՝ «Յե-
լիր, ում կյանքը անիծել ե»… Կյանքը մեղ անի-
ծել եր և մենք յելանք, — մենք, ստրուկների ու
սովորաների աշխարհ։ Բայց մեզ վրա կրակեցին…

— Դու փախչում ես, հարցը Եղ Դոգաննը:
Յես չելի փախում: Վոչ, ասացի, հալլենիք եմ
դնում: Խորհրդավին յերկիրը: Իսկ հետո՝ կդամ:
կդամ ասում եմ: Կդամ և ինչպես... Այստեղ ինձ
կարող են բռնել և կախել: Նրանք ինձ զիտեն:
«Գործադուլի կազմակերպիչը», ասում են: Ել
ինչպես մնալ... Յեկ հետո.— մերոնք շատ են ու-
զում իմանալ խորհուրդների յերկրի մասին: Ի՞նչ
ե տեղի ունենում այնտեղ: Կդամ ու կպատմեմ:
Յեկ կդամ պատրաստված: Կսովորեմ, թե ինչ-
պես անել, վոր մերոնք միանամուռ ընթանան,
ինչպես անել, վոր գործադուլը չկիժի, և այդ-

— Յես փախել եմ... Յես չեմ փախել: Թեև
այստեղ այնքան լավ ե և հալազատ, վոր վերա-
դառնալ չեմ ուզում: Կաց, մտածում եմ: Իսկ
հետո մտածում եմ.— գնա, գործ ունես-անելու:
Յեկա, տեսա, սիրեցի այս ամենը և անհաշտ դար-
ձա այն կարգերի դեմ: Պայծառ կերպով սկսեցի
պատկերացներ, թե ինչի՞ համար ենք կռվում.—
կռվում ենք ինչպիսի կյանքի համար, և այդպես:
ինչ ել լինի, մեզ մոտ ել այսպես պետք ե ա-
նել: Անպայման:

5.

«Յեվրոպացու» գալու առաջին որերին,
բանվորներին մի բան շատ զարմացրեց:

Այդ այն եր, վոր «Յեվրոպացին» գործարա-
նում իրեն զգում եր այսպես, ինչպես եր տանը:
Դա վոչ միայն բանվորի հարազատության զգաց-
մունքն եր բանվորական միջավայրի հանդեպ.—
ավելին եր:

Նալում ե շենքերից մեկին և ասում ե.

— Տասներկու թվին ե շինված, կարծեմ,
— Ճիշտ ե...

Իսկ տարեթիվը վոչ մի տեղ չի գրված:
Հարցնում ե. — Համար յերկու հանքահորն հի-
մի աշխատեցնում եք:

— Զե: Պղինձն անտեղ վերջացավ:

— Հա զե, իհարկե, վոքը հանքահոր եր:
Տարեկան յոթ հազար փութ: Իսկ այն նոր շեր-
տը յերբ բաց արեցիք:

— Քսանհինդ թվին:

— Այստեղից, յերկի տարեկան յերեսուն
կստացվի

— Յերեսունհինդ հազար:

— Հա, յերեսունից յերեսունհինդ:

— Ճիշտ ե. .

«Յեվրոպացին» թերը կանթել ե մեջքին,
նայում ե շուրջը և նորից հարցնում.

— Ճեղքված կաթսան վոր թվին փոխեցիք:

— Անցյալ տարի:

Բանվորները զարմանում են: Հավաքվում են
իրար դիմի և «Յեվրոպացու» դիմին:

— Վարպետ, այսպես ես խոսում, կարծես
թե դու շինած լինես այս գործարանը։ Այդքան
բան վհրտեղից գիտես։

«Յերոպացին» մի աչքն և փակում, ապա
մլուսը, և ծիծաղում ե։

— Համարյա թե յես եմ շինել։ Բա ի՞նչ։
Ու ծիծաղում ե նորից։

Բանվորները չեն հավատում և չեն հաս-
կանում։

— Բաս…

Քիչ հետո՝

— Թրանսիացիներին յերբ խոփկ տվեցիք։
Մեկն ուզում ե պատասխանել, բայց զար-
մացած մեջ ե ընկնում մի ջահել, շատ ջահել
բանվոր։

— Ի՞նչ ֆրանսիացի…

— Զգիտե՞ս, — ասում ե, «Յերոպացին»։ —
Այս մեր գործարանն առաջ պատկանում եր մի
ֆրանսիական ընկերության։ Շատ շահագործե-
ցին։ Պղինձ, վոսկի։ Յեվ այդպես։

Բանվորները լուռ են։

— Պապաշա, — ասում ե Սառան։ — Դու արդ
բոլորը վհրտեղից գիտես։

— Յես բան շատ գիտեմ, աղջիկս։ Եղ ել
գիտեմ։ Են ել գիտեմ, վոր համար յոթ հանքից
մի քիչ դեպի հարավ.. Բայց այդ մասին յես կա-
սեմ ճարտարագետին։

Բանվորները ծալը աստիճան հետաքրքը-
վում են։

— Ի՞նչ... ի՞նչ...

«Յերոպացին» գլուխը մոտեցնում ե նրանց
և բարեկամաբարը շնչում ե.

— Պղինձ կա... Շատ...

Զորս ամիս հետո հաստատվում ե նրա լեն-
թաղը ըստ թիունը։ Բանվորները զարմացած են։

— Դու մի գաղտնիք ունես, վոր մեզ չես
ասում, — հետաքրքրվում են նրանք։

— Ի՞ն, — թափահարում ե ձեռքը «Յերոպա-
ցին»։ — Ի՞նչ գաղտնիք։ Հասարակ բան։ Յես այս-
տեղ աշխատել եմ տամնվեց տարի առաջ, Փրան-
սիական ընկերության ժամանակ։ Յերկրում դեռ
վարպետներ չկային։ Դրսից ելին բերում։ Ինձ
ել բերեցին։ Ահա։

Այս անդամ ել են զարմացած բանվորները,
բայց ուրախ են և ծիծաղում են։

— Այդպես...

— Բա հանքը։

— Այդ հանքը հետազոտել ելին շատ վա-
ղուց։ Համար յոթից այն կողմ։ Զոգտագործե-
ցին։ Այդպես ել մնաց։ Իսկ յես գիտելի տեղը...

Դրանից հետո դեռ յերկար ժամանակ բան-
վորները «Յերոպացուն» հարցնում ելին, թե
ինչպես եր գործարանը տասնվեց տարի առաջ,

և յերբ նա պատմում եր, իրենք կուշտ ծիծառում եցին:

— Նապաստակի գործարան ե յեղել, վարպետ: Այդքան ել փոքր...

— Առում ես՝ ամեն որ մեկը մնում եր վաճքի տակ:

— Հա: Բայց յեթե մինչև հիմա մնալին դրանք, անպայման շատ կմեծացնելին գործարան ու փոսկի կդիզելին: Բայց լավ արեցիք: Խորի...

Լոռում են: «Յեվրոպացին ծոր ե տալիս.

— Բասսս...

6.

Կիրակի որը «Յեվրոպացին» վորսորդական հրացանն ուսեց:

— Վորսի յեմ գնում:

— Մենակ:

— Մենակ:

Ու գնաց գեղի սարը: Նա վորս անել վաղուց գիտե: Բայց այս անգամ նա վորս չի անում: Մտնում ե անտառ, խորանում ե նրա մեջ, հրացանը գցում ե մի կողմ և նստում ե:

Նա մտածելու շատ բան ունի: — «Յեվրոպացին»: Նա այսոր ստացագ նամակը և կարդաց: Ֆոռֆորը, ինարկե, վտանգավոր նյութ ե: Իսկ

ի՞նչ յեղան իր յերեխաները... ի՞նչ պիտի անեն սրանից հետո, առանց մոր...

Մեկը նրանցից նույնպես աշխատում ե լուց կու գործարանում. — վոքրիկ Եմման: Յերբ նա յել մեծանա և զառնա իր մոր չափ, նրա մատնելն ել կլինեն լուցկու պես բարձկ... բարձկ...

Իսկ եմիլը դարձել ե «Նկուղների մարդ», վորին վաղ թե ուշ՝ կարող են կախել մարդ սպանելու կամ գողության համար...

«Յեվրոպացին» հառաչեց: Նա պիտի թողնի իր հայրենիքը և պիտի գնա այնտեղ, վորտեղինքը ծնվել ե: Եմիլն ու Եմման այնտեղ են: Այնտեղ ե սարուկների ու սովորների աշխարհը:

Տարի և կես այստեղ. — լավ եր: Բայց պիտի վերադառնա: Մի որ մեծ քաղաքի փողոցները վառողի հոտով կցվես և հրացանաձգություն կլինի: Իսկ հետո կլինի մեծ հեղափոխություն, վորից հետո ամեն ինչ կլինի այսպես:

Այստեղ ել, ինարկե, թերի բանեք շատ կան: Որինակ, հանքափոր Սերգովի ընտանիքը վեց հոգուց ե բաղկացած, բայց նա մի սենյակ ունի: Այդ, ինարկե, թերություն ե: Բայց այդ վոչինչ, վորովհետև բոլորը գիտեն, Սերգոն գիտե, — «Յեվրոպացին» ել գիտե, վոր վազր մի սենյակը կդառնա յերկու, իսկ հետո՝ յերեք:

Իսկ այնտեղ վեց հոգու մեկ սենյակը կմնա

մեկ։ Ու դրա փոխարեն, մի որ վեցից հինգը կմնան, ապա՝ չորսը, յերեքը…

Այս ետարբերությունը և այս մեծ տարբերությունն եւ։ Անսահման մեծ…

Կրոնի կարմիր դրոշակը և կասի. — Սա յետք վերջին կոփիլը, լսում եք, սա վերջին կոփիլը, վերջինը, վերջինը…

Յեվ, հաղթականը…

Միահամուռ կգնան։ Զինված, վոխերիմ… Միահամուռ կգնան և կգնան պալատների վրա…

«Յեվրոպացու» աչքերի մեջ կրակներ վառվեցին։ Նա վեր ցատկեց, ուսեց հրացանն ու սկսեց արագ քայլել։ Ապա լսվեց նրա ձայնը, նա յերգում եր և յերգում եր հաղթ, ուժեղ։

— Մեր սեփական, փորձված ձեռքով։ Մեր ձեռքով։ Մեռած կինս։ Դու հիմի չկաս, բայց այնքան լավ ե, յերբ յես խոսելիս քեզ եմ դիմում։ Մենք հին աշխարհը կքանդենք մինչև հիմքերը և քո փոքրիկ եմման, և քո փոքրիկ եմին այլս չարաշար չեն տանջվի։ Այդպես…

Գործարանի մոտ, լսվում եր «Յեվրոպացու» յերգի ձայնը։ Բանվորները ծիծաղեցին։ Վորս անողը չի յերգի։ Կփախչի վորսը։

Բայց բանվորներից մեկը խորիմաստ կերպով նայեց և դիմելով հավաքված բանվորներին, համոզված ձայնով ասաց.

— Վարպետը մեծ վիշտ ունի, ինչպես յերեսում եւ։ Ո՞վ գիտե, ինչեր ենա տեսել աշխարհի վրա…

Իսկ բարձրից, անտառից դեռ լսվում եր.

— Ուր վոչ սարուկ կա, վոչ դժգոհ…

7

«Յեվրոպացու» գնալու որը։

Դեռ չեր կարելի վորոշել, լույսն եր շատ մթան մեջ, թե մութը՝ լույսի, յերբ նա արթնացավ։ Ծառերը խշում եին գիշերվա մասին, և գետը խշում եր դիշերվա մասին։

«Յեվրոպացին» կապկապեց իրեղենները։

Պղնձի մի կտոր, մի վոսկեգույն կտոր, վորդրված եր լուսամուտում, «Յեվրոպացին» վերցրեց և իրեղենների հետ դրեց պայտսակի մեջ։ Վերջացավ։

— Գնում ես, վարպետ։

— Գնում եմ։

— Կգամ։

— Ո՞վ գիտե։ Գուցե կգամ։ Գուցե չեմ գա։ Բայց կուզենամ գալ։ Շատ կուզենամ։

Յերբ նա դուրս յելավ լվացվելու, ամեն ինչ այնշան սովորական թվաց, վորնա չկարողացավ հաշտվել հեռանալու մտքի հետ։ Սրբիչով դեմքը չորացրեց և կանգնեց։ Նա սպասում եւ իրոք, մի

ըոպե հետո լսվեց ուժեղ սուլոց և մոտեցավ
գնացքը:

Գնացքը հեռացավ: Նա չգնաց: Նա մտածում
է. «Կզնամ ցերեկվա գնացքնվ»: Մտավ սենյակը,
վերցրեց փոքրաքանակ իրերն ու դուրս յելավ:
Աշխատանքային որն սկսվել եր:

Նա այսոր ինչու չի աշխատում: Ինչու մյուս
ներն այստեղ են, — զործարանում, իսկ ինքն
այստեղ ..

Նա ցանկություն զգաց գնալ, մտնել ներս
և կանգնել իր գործին: Նա նույնիսկ մոտեցավ
դռանը: Իսկ հետո հեռացավ: Նա յերեկ արդեն
վերջացրել ե իր բոլոր գործերը: Նա յերեկ յե-
րեկո արդեն հրաժեշտ ե տվել բանվորներին:
Նրան մնում ե նստել գնացք ու գնալ: Կանցնի
ինչքան ճանապարհներով... Կանցնի ինչքան ճա-
նապարհներով...

Կհասնի:

«Յեվրոպացին» գնաց կայարան և սկսեց
սպասել: Մի քիչ սուլեց ըթի տակ, ապա սկսեց
նայել ձորի ուղղությամբ:

Զորը դաշտ դուրս կգա, սելսերը կսլանան
ավելի առաջ ու կգնան... կգնան. . կգնան...

Կտանեն:

— Յերկաթը տաք-տաք կունք, - բարձրա-
ցավ հորձանքը և խփվեց նրա սրտին: «Յեվրո-

պացին» ուղղվեց: Նա վերադառնում ե: Պատ-
րաստված: Համոզված: Անհաշտ:

Այդպես ե վերադառնում ..

Յերեկվա արել լավ եր փայլում ձորում:
Ծառերի կանաչը յերեռում եր լավ:

Գնացքը յիկավ:

8

Զորում վերջալույս ե: Արևի այնքան շուտ
ե թեքվում սարերից այն կողմ: Յերկնքի վրա
դեռ նրա շողերն են յերեռում, իսկ ներքեռում
մոխրագույն մութն ե: Ծառերի տակ խավար ե
արդեն, և արդեն չղջիկներն իրենց թերեն են թա-
փահարում: Իսկ փայտափորիկը դեռ փորում ե...

Թեև դեռ լույս ե, բայց ելեկտրական լապ-
տերներն արդեն վառվում են զործարանի մո-
տերքում: Բանվորները նստել են շենքերի մոտ,
գետի ափին և խոսում են: Ծխում են ել:

— Յեվրոպացին գնաց:

— Գնաց:

— Լավ ձարդ եր ու լավ վարպետ:

— Լավ ձարդ եր ու լավ վարպետ:

— Ինչի՞ գնաց.

— Ո՞վ իմանա: Ասում են մեռել ե կիսր:

Մեկն ասում ե:

— Յես կարծում ելի, թե Յեվրոպան հե-

Քյաթի աշխարհ ե և այնտեղ ապրում են հեքյաթի
մարդիկ: Բայց ահա. մենք Յեվրոպայում բարե-
կամ ունենք և ընկեր: Ասել ե՝ բոլոր տեղերում
ել այնպիսի մարդիկ կան, վորոնք կարող են մի
ուրիշ աշխարհի մարդկանց հետ ընկեր լինել՝
աշխատանքի ընկեր և բարեկամ լինել՝ ազատ ժա-
մերի բարեկամ:

— Հեղափոխական մարդ եր:
— Լավ վարպետ եր:

Դրսում նստածները կամաց-կամաց մտան
իրենց տները: Պահակը մնաց: Նա վառեց ծխա-
խոտն ու հսկում ե: Նա պաշտպանում է իրեն
հանձնված պոստը:

Բանվորները հանգստանում են իրենց տնե-
րում: Նրանց մի մասն արդեն քնել ե: Բնակա-
րաններից մեկի մի սենյակում լույս կա: Այստե-
ղից լսվում ե ծիծաղի ձայն: Յերեխան, փոք-
րիկ յերեխան, զվարճացնում ե ծնողներին, իսկ
մյուս կողմում լուսիկը դասն ե սովորում:

Բանվորները հանգստանում են:

Բանվորներն աշխատում են: Յերբ ականջդ
դնես գետնին և լսողությունդ լարես, կլսես
հարվածների խուլ ձայներ:

Պղինձ են քանդում:

ԻԳՆԱՏԻՈՆԸ

1.

Կիրակի որը, յերբ գյուղում մարդիկ պա-
րապ ելին, և արևն ել փայլում եր անամպ յեր-
կնքի վրա իր տաք փայլով, — գյուղի մեծ փո-
ղոցով անցնում եր մի յերիտասարդ: Նա հագել
եր բավական շիկ, վոր սակայն, չեր սազում ի-
րեն: Նա դանդաղ առաջ եր գալիս և ձեռքում
բռնած մի ճիպոտի կտորը խաղացնում եր ճիշտ
այնպես, ինչպես Փրանտ յերիտասարդներն են խա-
ղացնում իրենց ձեռքի փայտիկը:

Բայց նա ֆրանտ չեր:

Նրա դեմքը, վորքան ել հպարտ լիներ ու
վեր ցցված քթով, այնուամենախիվ, մատնում
եր նրա գյուղական ծագումը: Իհարկե, իբրև գյու-
ղացի յերիտասարդ, նա հաճելի դեմք ուներ,
բայց այդ շորերի մեջ նա նման եր դեկոլտե հա-
գած կովի:

Հավաքված գյուղացիներն սկսեցին նաև
նրան և փսփսալ:

— Աղա, են Մուքելենց տղեն չի:
— Հա:

— Վոր տղեն:
 — Իգնատիոսը:
 — Են ե, բա ով ե:
 — Ադա, եղ հո ուսումով մարդ ա դառել...
 — Խի չի դառնա: Հերն ահագին մուլքի,
 հարստության տեր մարդ, ինքն ել սկի մատը
 մատին չխփող: Խի չեր սովորի վոր. խի մարդ
 չեր դառնա վոր...
 — Բա հմի գեղ խի յե յեկել:
 — Ո՞վ իմանա: Թե ասես իրեն ա շանց
 տալի...
 — ԶԵ, ուրիշ բան կլինի մտքումը:
 — Դու արի տես, պտի նշանվի...
 — Այ քու տունը չքանդվի: Վոր նշանվեր,
 քաղաքն աղջիկ չկար: Թե քաղաքի աղջկերքն
 իրեն չեցին առնի...

Իգնատիոսը լսում եր այդ խոսակցությունները, թե վոչ, — դժվար եր իմանալ: Միայն այն
 կարելի յեր տեսնել, վոր վորքան առաջանում եր
 գլուղի փողոցով, այնքան ավելի յեր հպարաանում նրա գեմքը և այնքան ավելի քաղաքավարի
 յեր շարժվում նրա ձեռքի զյուղավարի ճիպոտը:
 Յերկու անգամ նա տեսավ ծանոթների և
 թեթև բարեեց, հազիվ նկատելի կերպով շարժե-
 լով գլուխը: Ծանոթները սիրալիր բարեեցին, Մի
 քիչ ել առաջանալով, նա հանկարծ թողեց ճի-

պոտի շարժելը և կարծես փոքր ինչ կծկվեց:
 Քիթը մտավ սովորական դիրքի մեջ:

Նա մոտենում եր հավաքված մի խմբի, ուր
 կալին կոմիտեականներ, կուսակցականներ,
 գյուղխորհրդի նախագահը և ուրիշ շատերը:

— Իգնատ, — բղավեց մեկը հավաքվածներից, —
 հլա եստեղ արի:

Իգնատիոսը մուտեցավ:

Բոլորը նաևցին նրան:

— Բարի ձեղ:

— Բարի:

— Հը, գեռ գարնան կեսն ե, եղ ինչպես
 ալատահեց, — հարցրեց մի կոմսումոլիստ: — Համալսա-
 րանն արձակեցին:

— ԶԵ, չարձակեցին: Գեշ մարդու յերեսով
 ևսպես պատահեց:

— Վճնյ պատահեց:

— Վերս մատերիալ ելին տվել, թե կուլակի
 տղա յե: Նրանք ել սխալմամբ զտեցին:

Բոլորը լուռ նայում ելին նրան: Նա կուց-
 րել եր գլուխը և իրեն մի քիչ ճնշված եր զգում:
 Զեռքի ճիպոտն անհարմար դրության մեջ եր
 դնում նրան:

— Կուլակ ես, բա ի՞նչ ես, — խզեց լոռ-
 թյունը գյուղխորհրդի նախագահը:

— Ի՞նչի՞ լեմ կուլակ: Ինձնից ավելի կուլակները չկան: Այ, նրանք են կուլակ:

— Դու կուլակից ել կուլակ ես:

— Լավ, համայնք, ասենք թե կուլակ եմ: Դուք ընչի՞ չուզեցիք, վոր ձեր գեղից մեկ զարդացած, գաղափարով մարդ դուրս գար: Գեղի անունն ել կբարձրանար, ուրիշ բան ել...

— Դու կուլակների շահերը կպաշտպանելիք:

— Տո, Մնոյենց տղա, սուս ախր: Գոնեգոն մի խոսի: Անցած տարի բերանդ պատովում եր ժամի պատերը պաշտչելուց, հիմի կոմսոմոլ ես մտել ու ուրիշի վրա յել հլա խոսում ես:

Վիճաբանությանը խառնվեցին միքանի ուրիշներն ել:

Իգնատիոսն ամբողջ ժամանակ պաշտպանում եր իրեն, պատճառաբանելով, վոր յեթե բարձրագույն կրթություն ստանար, իր կապը կիսկեր իրենց կուլակ ընտանիքի հետ և կապը իրեն «բանվորա-գյուղացիական և կարմիր բանակալին խորհրդային ազատ քաղաքացի», իր սեփական աշխատանքով:

— Գիտակից մարդը կուլակին պաշտպան չի դուրս գա, — վերջացրեց նա:

Ոհաննեսը, վոր մինչև այդ լուս եր, ինքն ել խառնվեց խոսակցության մեջ:

— Ընկեր, դուք այնպես եք խոսում, կար-

ծեք, թե մի անգիտակից տարը լինեք. կամ գուցե մեղ եք այդպիսիների տեղ դնում: Դուք սիալ բաներ եք ասում: Կրթված կուլակը վոչ թե չքավոր ու նիշտ գյուղացիների շահերը կպաշտպանի, այլ նույն կուլակության, այն ել շատ ճարպիկ կերպով:

Իգնատիոսն հանկարծակի յեկավ: Ու թեև սկզբից չեր տեսել Ոհաննեսին, բայց իսկուն գլխի ընկավ, վոր նա յե կոմքջիջի քարտուղարը, կուսդպրոցն ավարտած Ոհաննես Ավետյանը, վորի մասին այնքան շատ խոսում են հարեան գյուղերում:

Մի ըոպե միայն շշմեց Իգնատիոսը և ապա ինքն իրեն գտավ:

— Ընկեր Ոհաննես, ձեզ հետ, իրեն ավելի գաղափարակից, կարելի յե ավելի գաղափարով և գիտակից խոսել: Յես կպարզեմ ձեր առջև մի շարք դիրեկտիվներ:

Անտեղի և սիալ գործածված բառերը քիչ մնաց ծիծաղեցնելին Ոհաննեսին: Նա տեսնում եր Իգնատիոսի ջանքերը, կրթված և կուլտուրական մարդ յերեւալ:

Բայց դու զացիներից շատերի վրա խոսակցական այդ յեղուն վորոշ տպավորություն թողեց: Նույնիսկ վախացներ յեղան:

— Առենքի հետ իրեն յեղով խոսալ գիտեւ

Գիտունի հետ՝ դիտունի լեզվով, անգետի հետ՝
ռամիկի լեզվով...

Իգնատիոսը շարունակեց.

— Այո, մի շարք դիրեկտիվներ։ Մտնելով
համալսարան և տեսնելով կոմունիստական գա-
ղափարի ֆունկցիաներն այդ չորս պատերում,
իմ սիրած հակաթեզիս ընդունեց կուլակների դեմ
և ամբողջ հոգով մի տարի սովորեցի ինդուս-
տրալիզմի շավզով ուղեղս գաղափարապես զար-
գացնել։ Բայց վորոշ մատերիալիստական թղթեր
իմ մասին գրվեցին և զտումը տեղի ունեցավ ի
վես իմ մասին

Ոհաննեսը լուս լսում եր, կարծես նրան խու-
տուտ ելին տալիս և նա ուղում եր կուշտ ծի-
ծաղել այդ գաղաժամ ու թերի համալսարանա-
կանի վրա։

— Հիմա, ընկեր Ոհաննես, իմ գյուղ ներ-
մուծվելու շնորհիվ, յես իմ կուլտուրական ու-
ժերս ուղում եմ նվիրել գյուղի սոցիալիզմի վե-
րականգնման աշխատանքներին և այն։ Հուսով
եմ, վոր գյուղի կոմբջիջի վարչությունն ինձ ա-
ռաջ կբաշի վորոշ ասպարեզի մեջ և կուլակացին
իդեոլոգիզմը չի ազդի իմ ուղեղի գաղափարա-
կան մասերի վրա։

— Ով վոր ուղում և աշխատել մեզ հետ և
հոգուտ մեզ, մենք նրան յետ չենք մղում, — ա-

սաց քարտուղարը, այս անգամ արդեն միանգա-
մայն լուրջ և համոզող տոնով։

— Շնորհակալությունն, - ասավ Իգնատիոսն
ու արագ հեռացավ, թագցնելու համար իր գեմ-
քի վրա փայլող յերանության ժպիտը և մեն-
մենակ վորոճալու անպատա նոր հաղթանակների
հումսերը։

2.

Յերեկոյան Իգնատիոսնց տանը հավաքվել
ելին մի շարք ծանոթներ և դրկիցներ, շնորհա-
վորելու համար Իգնատիոսի վերադարձը և նրա
«ուսում վերջացնելը»։ Յեկել ելին և տերտերը,
և գրկից Գալոն և ընդհանրապես «խոշոր» մար-
դիկ։ Մի փոքրիկ ընթրիք և միքիչ ողի գրված
եր սեղանի վրա և յուրաքանչյուր մտնողն ու-
տում եր մի կտոր բան, մի քիչ խմում եր ողուց,
շնորհավորում եր և, վորոշ ժամանակ զրուցելուց
հետո, դուրս եր գնում։ Մեկը դուրս եր գալիս և
մտնում եր ծյուսը, նա յել դուրս եր գալիս և
միքանի ուրիշներն ելին մտնում միքիչ հետո։

Իգնատիոսը նստել եր սեղանի գլխին, ծանր
հանգարտությամբ ու շարժումների դանդաղու-
թյամբ։ Հյուրերին հրամցնում եր Իգնատիոսի
հայրը, զբաղեցնում եր նրանց, մինչեւ վոր իր
«արժանագոր վորդին» բարեհաճի մի-երկու յեկ-

ըռպական բառ նետել և հիացնել հավաքված-ներին:

Սակավախոս դառնալու պատճառներ իգ-նատիոսը շատ ուներ: Նրա ուղեղը լցված եր գործունելության հազար ու մի տեսակ ծրագիր-ներով, վորոնց հաջող ընտրությունից եր կախ-ված իր գյուղապորհրդի նախագահ դառնալը, ա-ռաջ քաշվելը, և ով գիտե... կենտգործկոմն այն-քան ել հեռու բան չե... Բայ «կանոնագրքի», անկուսակցականն ել կարող ե կենտգործկոմի նախագահ լինել: Յեկ վերջիվերջո, կուսակցու-թյան գոները հո «լոթը կողպեքանոց» դաներ չեն, այնտեղ ել կարելի յե մտնել... Ո՞վ իմանա-քախտ ե:

— Կենտգործկոմը պետքս չի, — մտածում եր նա մերթ. մերթ, տեսնելով, վոր շատ հեռու յե գնացել իր ցանկությունների մեջ: Թող մի կու-սակցական գրվեմ, հարյուրութանասուն մանեթ ոռճիկ ստանամ ու իմ զլիխն ապրեմ...

Յեկ յերեմն նա սթափվում եր այդ «հար-յուրութանասուն մանեթանոց» քաղցը յերազից, տեսնելով իր քթի տակ ողու մի բաժակ և շնոր-հավորանքի յերկու-յերեք խոսք, — հաճախ ավելին:

Յերբ ներսում հավաքվածները, համարյա-բոլորը, կամաց-կամաց հեռացան, իգնատիոսը վեր կացավ նստած տեղից ու գնաց գոմի ողան: Այն-

տեղ նա արագորեն բաց արեց մնդուկը, հանեց արտեղից միքանի բրոցուրներ, գրելու թուղթ, թանաք, գրչակոթ և սկսեց գրել:

Նա գեռ նոր եր սկսել գրելը. յերբ գուոը ճռոաց և ներս մտավ մայրը.

— Իգնատ ջան, Ոսկիանց Աղասին յեկել ե, ուզում ե քեզ տեսնի:

— Ասա գործ ունեմ..

— Վայ, Իգնատ ջան, վհնց կլինի: Ոսկ-իանց Աղասին...

— Տո, թող Աղասու քրիստոսը լինի, չեմ կարա:

Մայրը շվարած կանգնեց մի ըռպե ևս, ապա մտաձոլոր գուրս յեկավ ողալից:

Միքանի ըռպե հանգիստ գրեց Իգնատիոսը, վոր մեկ նայում եր բրոցուրներից մեկին, մեկ մյուսին, թերթում եր, կարգում մի քիչ և դնում մի կողմ:

Նորից գուոը ճռոաց:

Այս անգամ ներս մտավ Իգնատիոսի հայրը:

— Իգնատ, այ բալա ջան: Խի չես գալի: Հալիվորն իր վոտով վեր ե կացել եկել քեզ տե-սության:

Իգնատիոսը գրելը թողեց.

— Այ հեր. թե ասեմ ես քու ոգտին ե, չես հավատա, Զայնազուրկ մարդ ես ախր: Եգուց-

մեկել որը վոչ դու կարաս ապրի, վոչ քու տղեն:
Կաց մի տեսնեմ ինչ եմ անում: Մի ճար ծտածեմ,
վոր ապրենք ես աշխարհիքի վրա:

— Եղ վճնց ախր, իգնատ ջան:

— ... Ծառալողի տունը չքանդվի, կամ կո-
մունիստի: Ծառալողին ու կոմունիստին ով կա-
րա ասի՝ եստեղից վեր կաց, ենտեղ նստի: Թե
մի ծառալող կլնեմ, թե մի կոմունիստ կլնեմ...

— Չուզողի աչքը դուրս գա, իգնատ ջան,
եղ ել ինսք ե:

— Չուզողի աչքն ել դուրս գա, տունն ել
քանդվի: Վոր վրես մատերիալ տվեցին, իմացան
թե հենց եղ ե: Ախր վճնց թե: Գեղի մեջ բջիջ
կա, խիղճ կա... Թե մի կհաջողացնեմ, այ հեր,
դու յել իմ շվաքի տակ լեն ու բոլ կապրես, ու
կհարստանաս:

Ծերունին ժպտաց:

— Դե գնա ասա եղ Աղասուն ու մեկել —
մեկելին, թե տղես հիվանդ ա, կարում չի, թե
գա: Ասա՝ պառկած ե Յես վասպ գիր ունեմ:

Ծերունին դուրս գնաց գոհ դեմքով, առանց
վորեւ ուրիշ բան հարցնելու կամ ասելու:

3.

Հետևյալ նիստին կոմբջիջի ընթացիկ հար
ցերի մեջ գրված եր «Իգնատիոս Միքայելանի
դիմումի հարցը»:

Ժողովի նախագահը կարձ կերպով ծանո-
թացրեց դիմումի բովանդակության հետ.

— Եղ գլադեն գրել ե, թե ինձ իրավունք
տվեք գասախոսություն կարգալու «Ավիախիմը և
յերկրագունդը և Խորհրդավին Միության կարմիր
գաղափարը» նյութի մասին: Գրել ե թե գեղա-
ցիներին կհետաքրքրի ու ես զարդի բաներ: Ինքն
ել համալսարանից գտված գիտակից անձնավո-
րություն ե, - ավելացրեց ժողովի նախագահը:

Ցեվ, հակառակ սովորության, վոչփոք չխո-
սեց: Հարցը գժվար հարց եր: Մեկն ուզում ե
գլուղացիների համար զեկուցում կարդալ, ներ-
կայացրել ե ծրագիր, - բավական խնամքով մշակ-
ված ե այն: Մյուս կողմից, նա կուլակ ե...
ինչ անել...

Բոլորն իրենց հայացքն ուզեցին դեպի Ո-
հաննեսը: Այդ Ոհաննեսը շատ անգամներ լուծել
ե այդ տիպի գժվար խնդիրները: Այս մեկն ել
յերեկի կլուծի:

Ոհաննեսը վեր կացավ.

— Ընկերներ, եղ մարդն ուզում ե գասա-
խոսություններ տալով և հասարակական վորոշ
աշխատանքներ տանելով, գլուղացիների համա-
կրանքն ու հարգանքը շահել ե ապա, կամաց-
կամաց ներս խցկվել ուրիշ տեղեր: Ճիշտ ե, նրա
զեկուցման ծրագիրն այնքան ել վատ չի կազ-

մված և վորոշ ողուտ կարող եւ տալ դյուզացիներին, բայց դրա դիմաց...

Յելքը գտնվում եր: Դեմքերը զվարթացան:

— ... Յեվ հետո, չմոռանանք, վոր նա ձայնագուրկ եւ ամենակարեսը: Նա չի դասախոսելու:

— Ճիշտ ե,

— Ճիշտ ե, ճիշտ:

Յելքը գտնված եր:

Քիչ հետո, ժողովի բարտուղարը «վորոշին» բաժնում իգնատիոս Միքայելանի դիմումի դիմաց դրեց.

— Մերժել:

—

Առաջին անհաջողությունը միայն մի փոքր հուսահատեցրեց իգնատիոսին: Վոչ ավելի: Յեվնա նույնիսկ հարցրեց արձանագրության բաղվածքն իրեն հանձնող կուսակցականին.

— Ագա, ձեր դռնբաց ժողովներն ինչ որեւին ալինում, ուզում եմ մեկ-մեկ դալ:

Կուսակցականը պատասխանեց և հեռացավ:

Նրա հեռանալուց հետո իգնատիոսը նորից բաց արեց արձանագրության քաղվածքը և կարդաց յերկու-յերեք անգամ: Յեվ ամեն անգամին շիկացրած յերկաթի նման իր հայացքն եր այ-

բուժ այն միակ բառը «վորոշեցին» սյունչակում.

— Մերժել...

— Թող մերժեն, վասս չունի, իմ եւ վախտը կզա: Բա վո՞նց: Առաջ գնալը խո փլավ ուտել չի: Կմերժեն ել, դեռ մի բան ել ավելին կանեն:

Իգնատիոսը թուղթը դրեց զրպանը, վերկացավ և գնաց սնդուկի մոտ: Նա բաց արեց սընդուկը, հանեց անտեղից բրոշյուրները և սկսեց ուշի-ուշով զննել և համեմատել իր կազմած ծրագրի պատճենի հետ:

— Զե, այ ջանըմ, ծրագիրն իրա կարգին ե: Եղտեղ մի ուրիշ բան կա, վոր չեմ հասկանում:

Ու Իգնատիոսի առաջ, իբրև վոխերիմ և անհաղթահարելի ուժ, պատկերացավ համագյուղացի Ոհաննեսը, կուս-դպրոցն ավարտած, գիտակից...

Ահա նա, ում դեմ պիտի կովի նախ և առաջ ինքը, — իգնատիոսը: Բայց ինչպես:

Մաքերի հետ ընկած, նա սկսեց խազմզել թղթի վրա և պատահաբար գրեց «մատերիալ»: Նայեց այդ բառին իգնատիոսը և ուրախությունից ցնցվեց:

Յելքը գտնված ե:

Գրչակոթն արագ թաթախեց թանաքամանի մեջ, թուղթը դրեց առջեն ու միքից մտածելուց

հետո, սկսեց գրել անհավասար, անփուլթ ձեւ-
ռագբով:

«Ելութ «Մաճկալ» թերթին, այսինչ գլուղի-
կոմքջիջի քարտուղար Ոհաննես Ավետյանի վրա»...

4.

Յերկու շաբաթ եր անցել:

Մի որ փողոցում իգնատիոսը հանդիպեց
Ոհաննեսին:

— Բնիկեր Ոհաննես...

— Բարեւ:

— Ընկեր Ոհաննես, բա ուր մնաց ձեր խոսքը:

— Վար խոսքը, իգնատ...

— Են, վոր ասում ելիք, թե ձեզ հետ մեկ-
տեղ գործ անել ուզողին քացի չեք տալ:

— Ճիշտ ե:

— Բա ինչի՞ են ծրագիրը...

— Գիտես ինչ,—մտերիմ տոն բոնեց Ոհան-
նեսը,—գու ձայնազուրկ ես. հորդ տան ու անտե-
սության մեջ աշխատում են յերեք-չորս բատ-
րակ, քու հերդ... Վար մեկն ասեմ, քանի վոր
դու ինձանից լավ գիտես: Նիմի, իգնատ, թե ու-
զում ես ապրել, վոնց վոր դու յես ասում, «մեզ
հարազատ կերպով», լավ կանես, վոր բաժանվես
հորիցդ, ստեղծես առանձին անտեսություն և
ինքդ մշակես կամ զնաս քաղաք ու ծառայես:
Այ, են ժամանակ, ուրիշ բան...

— Ինչի՞ ախը, այ Ոհաննես, իմ հերը ուսմ
ե վասել ախը...

— Քու հերը: Քանի գու նրա մոտ ես ապ-
րում, ուզես-չուզես, պիտի պաշտպանես նրա շա-
հերը: Քեզ հաց ու ջուր տվողը նա յե, մենք խո
չենք...

Իգնատիոսը լուռ բաժանվեց: Նա այդ ժամին
չեր մտածել: Կամ, ավելի ճիշտ՝ մտածել եր շատ
քիչ: Ահա: Ուրեմն եսպես: Լավ:

Յեվ նա յերկրորդ անգամ զգաց, վոր գլու-
զում իր ամենամեծ արգելքը Ոհաննեսն է, ապա
նոր միայն բջիջը: Յեվ նա յերկրորդ անգամ
զգաց, վոր նրան պետք ե չեզոքացնել: Հիշեց
թերթին ուկարկած իր թղթակցությունը, վորը
գեռ չեր տպվել:

Բայց դա քիչ եր իգնատիոսի համար: Ինչ-
վոր թղթակցություն, այն ել կեղծ անունով:
Արտեղ ուրիշ բան ե հարկավոր: Ավելի մեծ
գործ...

Նա հասավ մի քարի ու նստեց: Գործ ե
հարկավոր: Իսկ գործը մեն-մենակ չես սկսի:
Յերեխ գլուղում կլինեն ուրիշներն ել, վորոնք
իրեն հետ մի կարծիքի կլինեն...

Ո՞վ գիտե: Պետք ե փորձել:

Ու «փորձելու» համար, նա քայլերն ուզզեց
դեպի որկից Գալոյի ողան: Ներսում Գալոն եր

նստած, վորն զբաղված եր գերանդու բերանը
ծեծելով:

— Գալո, բարեւ:

— Այ բարե՛, իգնատ ջան: Ասա տեսնեմ:

— ԶԵ. հենց ենպես:

Իգնատը նստեց: Մի տարի յե, ինչ հեռացել ե գյուղից: Գնաց քաղաք, վորպեսզի համալսարան մտնի կամ վորեև հարձար ծառալություն ճարի և ապրի: Վոչ մեկը հաջողվեց, վոչ մյուսը: Յեվ յերբ մի որ, հազար չարչարանքից հետո ներս խցկվեց համալսարան, հազիվ անցած յերեք ամիս, զաեցին: Հույսը չկարեց: Նախքան գյուղ վերադառնալը, ելի քաղաքում մնաց վորոշամաննակ: Ուտում եր գյուղից ստացված մեղրն ու կարագը և միշտ մտածում այն մասին, վոր ահա, այդ ել կվերջանա: Ո՞վ գիտե, գյուղում հիմա ինչեր են տեղի ունենում: Ինչ տուրքեր, պահանջներ: Այդ ըստեներին, նրա ջղերը գըրգովում ելին և նա սկսում եր հանցավոր նյութերի մտախն մտածել: Թե մի պատերազմ կլիներ, անդլիացիները, կամ յերանի թե նորից յետ գալին...

— Ծնդ, ծնդ ծնդ, գերանդին եր սրում:
գրկից Գալոն:

— Գալո:

— Հա, իգնատ ջան...

— Ես տարի ինչքան տուրք պիտի տաս:
— Իգնատ ջան, ինչ ասեմ, յերկու հարյուր-
քառասուն մանեթ:

— Ծը, ծը, ծը, — ափսոսանքով գլուխն ո-
րորեց իգնատիոսը:

— Ծնդ, ծնդ, ծնդ, — սրվում եր գերանդին:

5.

Իգնատիոսը կոմքջիջից հույսը կտրեց: Նույն-
իսկ մտքից հանեց կոմքջիջը: Ուրիշ ձանապարհ
և հարկավոր, Բջիջի հետ գործ գլուխ հանել չի
լինի, իսկ անիծված հոդվածը չտպվեց ու չտրպ-
վեց...

— Գոնե փոկի մեջ մտնելի, ելի մի բան
եր, — մտածում եր նա:

Յեվ այսպես, որերն անցնում ելին: Յեվ մի
որ, այն ժամանակ, յերբ նա բոլորովին իր հույ-
սը կտրել եր բջիջից, — իրենց դուռը թակեցին:

— Ո՞վ ե:

— Բաց արա, իգնատ:

Ներս մտավ գյուղի կուսակցականներից մե-
կը և անտարբեր դեմքով հայտնեց իգնատիոսին,
վոր յերեկոյան գմ խրճիթ ընթերցարան, բջիջ
նիստին: Գործ կա:

Անհասկանալի մի ուրախություն պաշարեց
նրան:

— Ի՞նչ գործ, հը...
— Չեմ իմանում:
— Դե կաց մի-մի հատ ողի գցենք:
— Չե, իգնատ, յես վռազ եմ, գնացի:
Կուսակցականը զնաց:
Մինչև մութն իջնելը նստել եր իգնատիուը
գոմի ողաբում և մտածում եր: Եղ լինչի կան-
չեցին: Չինի բջիջ պիտի ընդունեն: Համալսա-
րան ընդունել չտան...
Մի անգամ միայն վատ բան անցավ նրա
մտքովը: Բայց հետո հանգստացավ: Հա, յեթե
նյութը տպված լիներ, ուրիշ բան: Բայց հիմի,
քանի վոր չտպվեց...

— Զուր ուղարկեցի, նույնիսկ մտածեց
նա: Եկուց-մեկելոր չբռնեն տպեն ու ամեն գործ
փչանա:

Բայց հետո մտածեց, վոր «հերքում» կորի
և կուղարկի թերթին: Այդ հերքումի մեջ կլանդի
հոդվածը չտպել:

Բջիջի բոլոր անդամները զալրացան, չափա-
ղանց զալրացան, յերբ շրջկոմից ստացան մի
հոդված զրպարտություններով լի, գրված Ոհան-
նեսի մասին: Հոդվածի հետ շրջկոմը մի գրու-
թյուն եր ուղարկել բջիջի բարոյին, վորտեղ ա-

ուաջարկում եր քննել և ստուգել հոդվածի մեջ
գրվածները:

— Ով ա ավել նյութը:

— Տակը գրված է Ցուցամատ. ի՞նչ գիտե-
նաս, թե ով ե... Բայց գրությունը հանձնողը շուռ
տվեց թղթի մուտք յերեսը և բոլորը կարդացին.
«Յեթե նյութս տպագրվի, ստորագրեցեք Ցու-
ցամատ: Իսկական անունս ե և ազգանունս իգ-
նատիոս Միքայելյանց»:

— Իգնատը...

— Տո, Մուքելենց իգնատը...

— Տո, նա ի՞նչ գիտի մեր բջիջն ու Ոհան-
նեսին, նա ով ե, նա ում...

Խրճիթի գուռը ճռալով թրխկաց և թրխ-
կալով ճռաց: Ներս մտավ իգնատը. Բոլորը
լոեցին:

Բջիջի բուրոյի անդամներից մեկը, վոր նա-
խագահում եր նիստին, դարձավ դեպի նա.

— Նստի, իգնատ...

Իգնատիոսը, բոլորովին հանգիստ, նստեց:

Այդ ոսպելին ներս մտավ նաև Ոհաննեսը:
Յերբ գուռը ճռաց, իգնատիոսը շուռ յեկավ և
նայեց:

— Իգնատ, հարցրեց նախագահը, — գու Ո-
հաննեսին ինչքան վախտանից գիտես:

Իգնատիոսին հարցը թվաց բոլորովին վռչ-

պաշտոնական, մանավանդ վոր, նրա կարծիքով,
ժողովը գեռ չեր բացվել, ուստի և, հանդիսա
պատասխանեց.

— Ընկեր Ոհաննեսին. ես մեկ ամիս ե:
Դրանից առաջ յես լսած կամ նրա մասին, բայց
վոչ-տեսած:

— Մե՞կ ամիս:

— Հա:

— Նա քու քրոջդ անպատիվ խոսք ասած կա:

— Չե:

— Մորդ:

— Չե: Եդ ինչի՞ յեք հարցնում:

— Հենց ենպես Հա, ասացիք՝ ասած չկա:

Լավ: Նա քու ոեխտ ջարդած կա:

— Ոհաննեսն եդ տեսակ մարդ չէ, եդ ի՞նչ հարցուփորձ ե:

— Բա վոր եդ տեսակ մարդ չի, յես քու
են... հա, ասել եցի, առ կույտի զավակ, բա ես
ի՞նչ ես գուրս տվել...

Յեզ այդ խոսքերի հետ ձեռքն առավ նրա
հոգվածը:

— Եդ ով ա զրել, յես:

— Բա ով, Մուքելանց թամբալ, բա ով:

— Համանք, եդտեղ դրած ե Ցուցամատ,
դու ի՞նչ գիտես եդ ով ա...:

Բարձրացագ խուռը ծիծաղ, վոր փոխվեց
աղմուկի:

— Դու ի՞նչ գիտես, թե Ցուցամատ ե գրած:
— Բա թղթի մեկել յերե՞սը...

Իգնատիոսը գլուխը կորցրեց: Մեկ ուղեց
խոսել, ապա ասելու վոչինչ չգտավ, ժպտաց,
դեմքը թթվացրեց ու նստեց վառված ածուխի
պես:

Յերբ աղմուկը դադարեց, նորից խոսեց նա-
խագահը.

— Ընկերներ, ես թուղթը զրպարտություն
ե. յս ասում եմ, եղ մասին մենք գրենք «Մաճ-
կալին» ու գրենք զրպարտողի անունը: Ինքը,
թե կարա, թող հաստատի, թե դորթ ա գրել:
Չենքը բռնող չկա:

Քարտուղարը «Վորոշեցին» ոյունիակում
գրեց.

— Սխալ գուրս եկավ, թե ընկեր Ոհաննեսն
աղջկերքին աչքով ա անում ու սխալ ձանապա-
րով ա առաջ տանում, վոր նա գլուղացիներին
ծեծում ե և բջիջը թալֆա յե, ինքն ել դրա մե-
ծը: Դիմու սխալ գուրս եկավ և Իգնատիոսը վո-
չինչ չասաց ու պապանձվեց ու նստեց: Ու սուս
վեր կացավ, գնաց:

Յեզ այսպես, այս անգամ արդեն Իգնատի-
ոսն իր հույսերը վերջնականապես խզեց բջիջը
հետ և դադարեց վորեն բան հուսալուց:

Այդ գեղըը վորքան վոր հուսահատեցրեց,
այնքան ել կատաղեցրեց իգնատիոսին և ատե-
լությամբ լցրեց գեղի բջիջը։ Նա տեսնում եր,
թե ինչքան սխալված ե լեզել ինքը, յերբ կար-
ծել ե, թե բջիջն առանց Ոհաննեսի, դա նույն
ե, ինչ վոր մարդն առանց զլխի։

Իր հոգվածի քննության որն Ոհաննեսն ամ-
բողջ ժողովի ընթացքում լուս նստած եր և վոչ
մի խոսք չասաց, չխառնվեց վոչ մի բանի։ Բայց
բջիջը գործն առաջ տարավ այն ել ինչպես...

Իսկ հետեւալ որվանից, ամբողջ գլուզն իմա-
ցավ իգնատիոսի զրպարտության մասին։ Զնշին
փոքրամանությունը, — զյուղացիների միայն մի
փոքրիկ մասն եր, վոր իգնատիոսին ասում եր.

— Իգնատ ջան, վրիդ շառ են զցել, ասում
են։ Ասում են, հետդ ընկած են...

Յեվ այդ ասողներն ել դրկից Գալոն ու
մյուսներն ելին։

Իգնատիոսը քաշվեց իր մեջ, կծկվեց։ Յեր-
կար ժամանակ նրա մասին վոչինչ չլսվեց։ Տա-
նից քիչ եր գուրս գալիս և յեթե գուրս ել գա-
լիս եր, գնում եր դրկից Գալոնի մոտ զրուց
անելու։

Մի որ, սակայն, դրկից Գալուենց տան խո-

սակցությունն ստացավ ավելի կարեոր բնույթ։
Յերեկոյան այստեղ եր հավաքվել գլուզի «համ-
բա»-ն, — կուլակությունը։

— Քյասիբները, — ասում եր իգնատիոսը, —
քյասիբները խելքի եկան։ Հյա տես, արակտոր
ունեն՝ մեկ, խոտհար ունեն՝ երկու, սեպարատոր
ունեն՝ իրեք, մաշինափոցի ունեն՝ չորս, պահ-
րի արտել ունեն, փոկ ունեն, ուրիշ շատ զահ-
րումար ունեն։ Ե՛, մենք ել աշխարքի խորթ
բալաներն ենք։ Մեզ վոչ տրակտորի ընկեր են
վերցնում, վոչ արտելի, վոչ ել ուրիշ բան։ Բա
մենք մեր գլխի եղ ամենը չենք կարա անի...
Փող չունենք։ Գորթան առնելը փողով չի, —
փողը տուր, — առ...

— Հըեն, — ընդհատեց Հովասափը. — անցած
ամիսներն եր, յես սեպարատ առա, համ իմ գործն
եր յոլա գնում, համ ել դրկիցների կաթն ելի
զատում։ Դրուստ ա, արտելի սեպարատից գեսը,
շատ գեղացիներ ենտեղ են տանում իրենց կա-
թը, ամա իմ սեպարատս ել պակասավոր չի։
Հինգ-վեց տուն քրեհով ինձ մոտ ա զատում
կաթը։

— Տեսմք, համայնք, — շարունակեց Իգնա-
տիոսը, — յես ասեցի ախր։ Քյասիբները մեզանից.
սովորեցին, — հարստացան, մենք ել եղ քյասիբ-
ներից սովորենք, վոր իրենցից յետ չմնանք։

Իդնատիոսը մի ըոսկե լոեց։ Ըսդմիջումից ոգովելով, վճրը մի ողի խմեց, վճրը մի կտոր բան զրեց բերանը։

— Եսպես։ Փողը կհավաքվի Գալոյի մոտ, վերջը տեսանք, վոր թամամեց, կտանենք քաշաք ու ենտեղից մի լավ, թառան տրակտոր կառնենք։ Վարկային ընկերություն, մնկերությունը մեղ հետ գործ չունի։ Մենք մեր փողովը կառնենք…

Այս կարևոր խոսակցությունն եր տեղի ունենում զրկից Գալոյի տանը։

Խոսում եր Մուքելանց իդնատը, լսում եր նրան զյուղի «համփան», հիանում ու լիապես հավատում նրան։ Զե վոր խոսում եր վնչ մի ուրիշը, քանի իրենց «ծոցից թռած դուշը», — լուրացինը։

Միքանի որ հետո գյուղում շատ-շատերն իմացան, — իսկ հետո ամբողջ գյուղն իմացավ, վոր Մուքելանց, Գալոյենց ու «մյուս» ընտանիքների միացյալ ուժերով մի տրակտոր և գնվելու։ Յերբ արտելին հասավ լուրը, այնտեղ սկսվեց մի արտակարգ եռուղեռ։ Զինի թե, իրոք, արակտոր գնեն և զեռ չկողեկտիվացրած անտեսություններին վերցնեն իրենց աղջեցության տակ։ Սկսվեց նոր թափ ու աշխատանք, «100 տոկո-

սով կոլեկտիվացնելու» գյուղի «չքավոր ու միջակ գասակարգին»…

Յերբ Ոհաննեսին հաղորդեցին այդ մասին, նա ձեռքը թափ տվեց և ծիծաղեց։

— Զե՞ն առնի, թե առնեն ել՝ մեր զեմ հոչե՞ն կարող։ Իշխանությունը մեր թիկունքն է, գյուղացիների ամենախոշոր մեծամասնությունը մեզ հետ։

Բայց, իհարկե, այս խոսքերն արգելվ չհանդիսացան, վոր նա յերեկոյան զնար արտելի վարիչ Գաբրելի տունը և յերկու ժամ տեսող կարևոր խոսակցություն ունենար նրա հետ։

7

— Վոր գյուղխորհուրդը կա, ել թջիջը գեղի մեջ ինչացո՞ւ յե, — հաճախ մտածում եր իդնատիոսը։ Յեկ շատ անգամ ել այս մասին նա խոսում եր գյուղացիների հետ։

— Բջիջ ե, — իրեն համար և թջիջ։ Գեղի գործերին ինչի՞ յե խառնվում։ Վորոշում վոր հանեց, ել պրծավ. եղ վրոշումը կանցկացնի։ Ինչի։ Բա մենք եստեղ մարդ չե՞նք…

Ու նորից նրանք ելին, — տերտերանց տղերքը, գրկից Գալոն ու մյուսները, վոր Իգնատիոսին լսելուց հետո գլուխները թափահարում ելին գրական կերպով։

Բայց իգնատիոսն, իհարկե, ալդ չեր ուզում:
Այդ շատ քիչ եր:

Նա մտածում եր համախոհներ վնասուել գլու-
ղացիների ուրիշ — մյուս խավերի մեջ:

Այդ նպատակով, նա տրակտոր գնելու լու-
րը դուրս գցելուց հետո, հանդիպում եր այս
կամ այն գյուղացուն:

— Վճնց ես, լավ ե: Արագ վճնց ե: Ի՞նչ
ես ցանել, գարի, ցորեն: Տրակտորով վարեցիր:
Գյուղացին պատասխանում եր:

— Հա: Լավ: Դու դիտես, տրակտորը լուվ
բան ե, շատ լավ: Արորից ել լավ ե, հա դու-
թանից ել: Տրակտորը քանիսն վարեց:

Գյուղացին նորից պատասխանում եր:

— Վայ, վայ, վայ... եղբան ել թմնոց: Եղ
անխիղճները մարդ են թալանում, ի՞նչ խարար
ե: Դու հլա կայ, ես ա, եսոր-եզուց յես մի լավ
տրակտոր եմ բերել ապի: Կոլեկտիվի տրակտո-
րի կես գնով եմ քրեհով տալու, կես գնով: Են
վախտը քեզ պես հալալ աշխատանքի տեր դե-
ղացիներն ել կոլեկտիվ չեն գնա: Մարդի թա-
լան ե, ի՞նչ խարար ե...

Այս անդամ գյուղացին չեր պատասխանում
և մտածուտ ու թերահավատ՝ հեռանում եր:

Յեփ այս կերպ անցնում ելին որերը, աշ-
նանավարի ժամանակը մոտենում եր, մոտենում

եր զյուղխորհրդի ընտրությունը, իսկ իգնատիո-
սնց արակտորը գեռ չկար ու չկար:

Այն ժամանակ, իերք գյուղի գաշտերն սկսվեցին
վարպել, գյուղացիներն աղևս դադարեցին հավա-
տալուց, վոր իգնատիոսնք արակտոր են առնելու:

Գյուղացիներից վոմանք ասում ելին, վոր
իբր թե կուլակներն իբար մեջ չեն կարողացել
փող հավաքել, չեն հավաքել նույնիսկ տրակտո-
րի գնի կեսը: Իսկ վոմանք ել ասում ելին, թե
փողն ամբողջապես հավաքել են, բայց «տրակ-
տորի մագաղինը» տրակտոր բաց չի թողել, ա-
սելով, վոր առաջին հերթին տրակտորը ծախում
են չքավորների ու միջակների «կոլեկտիվներին»:
Են չքավորների ու միջակների «կոլեկտիվներին»:

Են չքավորների ու միջակների «կոլեկտիվներին»:

Մյուս կողմից, վարկավին ընկերությունը
վոչ մի աշակցություն ցուց: Հեր տվել:

— Դուք կուլակ եք, — հարուստ եք, — տսել
եր վարկավին ընկերությունը: — Հլա մի կացեք,
թող չքավորն ու միջակն ել հարստանա...

Այնուամենայնիվ, արդյունքը մեկ եր, — իգ-
նատիոսնք տրակտոր չառան:

Վորքան յեղավ գյուղացիների ծիծաղն ու
ծաղը, յերք Գալոյենց արտօւմ, այդ տարի աշ-
նանը, ելի նույն հին, փայտե գութանն սկսեց
վարել իր ծուռ ու մուռ ակուները:

Գյուղխորհրդի ընտրության ժամանակները
մոտեցան:

Իգնատիոսինց, Գալուենց, տերտերանց և
մյուս տներում տիրում եր մի արտասովոր յե-
ռուգեռ: Գնում ելին իրար տուն, գալիս, խոսում,
խորհրդակցում, ելի խորհրդակցում ու խորհրդ-
դակցում:

Հավաքվելու տեղ, գլխավորապես, ընտրում
ելին Գալուենց տունը, յերբեմն նաև՝ Իգնատիո-
սինցը: Զայնազուրկների ցուցակի հրապարակ-
վելոց մի շաբաթ առաջ տեղի ունեցավ նրանց
«գլխավոր» խորհրդակցությունը:

— Մենք ես տարի անպայման մեր մարդի-
կը պտի ունենանք գյուղխորհրդի մեջ, — ասում
եր Իգնատիոսը: — Մեր մարդիկը մեզ չեն ճնշի,
մեր կողմը կպահեն: Չե, անպայման պտի ունե-
նանք...

Նրա խոսակցությունը հաճախ ընդհատվում
էր: Ընդհատում եր հենց ինքը, — Իգնատիոսը:
Խոսում եր մի քիչ, ապա հանկարծ մտածկոտ
լուսում եր: Կարծես նրա մեջ կրվում ելին ուրի-
շին հավատացնելու ցանկությունը և սեփհական
թերահավատությունը: Նա կանգ եր առնում
խոսքի կիսին և կարծես մտածում: — արդյոք հնա-
րավո՞ր, ե, խելքի մոտելի բան ե իմ ասածը...

— Ախր, իգնատ ջան, մենք մեր մարդիկը
վհնց ունենանք եղ անտերի մեջ: Մենք դիմու-
ել ձախազուրկ ենք...

Տիրեց լոռություն:

— Յես ել հենց եղ եմ ասում, — խոսեց Իգ-
նատիոսը: — ասում եմ մի ճար անենք: Վոր ձայ-
նազուրկ չնելինք՝ ել ինչի ելինք մտածում վոր...
Նորից վոչ վոք չխոսեց:

Յեվ յերբ հավաքված տաս-տասչորսն ել ի-
րենց մտքերի հետ ելին, մեկը ձեռքը մեկնեց.

— Յես ձայնազուրկ չեմ...

Բոլորը միանգամից շուռ յեկան դեպի նա:
Պողոսը...

— Հա, տո հա, Պողոսը ձայնազուրկ չի:

— Եղ վհնց, Պողոս, գրնեւստ...

— Պողոսը ձայնազուրկ չի:

— Գեղացիք, հլա ենպես խոսեք, մենք ել
մի բան հասկանանք...

— Չեմ, ելի, ախպեր, ձայնազուրկ չեմ:
Անցած տարի վոչ ցուցակ ընկա, վոչ ել...

— Վոչ ել գյուղխորհուրդ, — կատակի տվեց
Գալոն:

— Թե մի յերկու մարդ կունենայի թիկուն-
քիս յետեւը, բա գյուղխորհուրդ չելի դառնա:

— Վնաս չունի, Պողոս, դու ես տարի
կմանես գյուղխորհուրդ, — հավատացած տոնով
ասաց Իգնատիոսը, խփելով Պողոսի ուսին:

Հավաքվածներն հանդսաացած շունչ քաշեցին:

Բայց զլխափոր արգելքը դեռ առաջներն եր: Ուրախ տրամադրությունը լերկար չտեղ: Հավաքվածներից լուրաքանչուքն ինքնաբերաբար սկսեց մտածել նույն բանի մասին և մտածկու լուց: Յեվ ալդպես լուցին բոլորը: Ապա նրանցից մեկը, գլուխը բարձրացնելով և նայելով դես ու դեմ, կամացուկ ձանով հարցրեց:

— Բա ովկ թեկնածու տա Պողոսին...

— Ո՞վ ընտրի, — ավելացրեց մի ուրիշը սեղանի հակառակ ծալիքից:

Ըստ լերեռութին, բոլորը մտածում ելին պատասխան գտնելու մասին: Այդ եր պատճառը, վոր նրանցից մեկն իսկուն վրա բերեց:

— Յես իմ մշակին կհամոզեմ...

— Յես ել որկից Խաչիլանց քլուղֆաթին:

— Դե, եղ վոր եղակես ե, մի լերկու մարդ ել յես համոզեցի: Եղավ:

— Ի՞նչ պաի ամի, վոր չինի:

— Յեղավ, լեղավ, — բացականչեց իգնատիսը: — Յեղավ, կինի: Կնարդի...

Ու մտածկու լուց...

— Բա ի՞նքը...

Ի՞նչ կարող ե անել գյուղխորհրդի մեջ լսեղճ ու կրակ, աշխարհից բեխաբաք Պողոսը: Իրեն

ընարելին: Բայց վճնց: Զե վոր ինքն ել ե ձայնագուրկ...

Մտածեց իգնատիսն այդ մասին և նորից մտածկու ու դանդաղ ձայնով կրկնեց.

— Այ, լեղավ...

9

Ամեն ինչ լավ եր ընթանում: Կուլակներից մեկն իր բարակին համոզեց, մյուսն՝ իր դրկեցին, լերըորդն ել՝ մի լերկու հոգու: Յեվ լերեքն ել հավատացած ելին, վոր իրենց «համոզած» մարդիկ վերջին բոպելին չեն տատանվի:

Ամեն, ամեն ինչ լավ եր:

Ընտրությունից միքանի որ առաջ ձայնագուրկների ցուցակները կպցրին գլուղխորհրդի դուանն ու լեկեղեցու պատին: Իգնատիսն անդուապես վազեց կարդալու համար: Յեվ վորդիջապես վազեց կարդալու համար: Յեվ վորդը մեծ լեղավիր զարմանքն ու ապշտիյունը, լերը մյուս անունների հետ միասին ձայնագուրկների ցուցակի մեջ գտավնակ Պողոսի անունը...

Ուրեմն, ամեն մի ծրագիր քանդվեց...

— Ես ի՞նչ բան ե, համանք, — բղավեց նա: — Խեղճ աշխատավոր մարդուն դցել են ձայնագուրկի ցուցակը: Պատճառը...

«Պատճառը» դրված եր ազգանունների կողքի սյունյակում:

— Գալս Ռւսուլյան — սպանության համար:
— Արիստակես Բոշբողազյան — գողության
համար:

— Վառմ Հարոյան — նախկին քեդ-աղա:
— Պողոս Պողոսյան — կուլակ:

Իգնատիոսը վոչինչ չհասկացավ: Ի՞նչպես
թե կուլակ...

Նա արագ շուռ յեկավ և գնաց լուրալին-
ներին հաղորդելու պատահածի մասին: Ցեղ
յերք թեքվում եր կողքի փողոցը, նրա դեմ դուրս
լելան Ոհաննեսն ու գյուղխորհրդի նախագահը:

— Տն, ձեզ եմ ասում, Պողոսը կուլակ ե...
— Բա ի՞նչ ե...

— Անցած տարի բա կուլակ չե՞ր...

— Անցած տարի յես ել ես տարվանը չելի,
դու յել, մեկել-մեկելն ել: Բա վժնց, մարդն ե-
զել ե, վոր փոխվի: Պողոսն անցած տարի մի-
ջակից բարձր եր, ես տարի կուլակ ե:

Իգնատիոսը մտամոլոր շարունակեց իր քայ
լերը:

10

Նոյեմբերի կեսերին Իգնատիոսը գյուղից
անհետացավ: Բաժանվեց ընտանիքից, իր բաժի-
նը փողի վերածեց, վերցրեց ու գնաց:
Գնայուց առաջ նա ասել եր.

— Գնում եմ: Գեղի մարգարեն պատիվ
չունի իր գեղում: Գնում եմ ուրիշ տեղ: Ենպես
տեղ, վոր իմ հարզը ճանաչեն:

Այդ խոսքերը լսել ելին միքանի գյուղա-
ցիներ:

Յերկար ժամանակ Իգնատիոսից լուր չը-
տացվեց:

Ապա սկսվեցին տարածվել միքանի լուրեր:
Գյուղացիներից վոմանք ասում ելին, վոր նա
նորից գնացել ե համալսարան «ուսումը շարու-
նակելու», իսկ վոմանք ել պնդում ելին, վոր նա
այնինչ գավառի այնինչ գյուղում, իր ոձի լեզ-
վով կարողացել ե խցկել դպրոցի գաներից ներս
և դառնալ թվաբանության ուսուցիչ:

Բջիջն ու գյուղխորհուրդը մտագրվեցին
ստուգել լուրը...

ԲՈՎԱԴՏՎԿՈՒԹՅՈՒՆ

- | | |
|----------------|----|
| 1. Յեղբայրացին | 3 |
| 2. Իգնատիոսը | 23 |

Мкртич Армен
Р А С С К А З Ы
Часть I.



ԳՐԱԴԱՐԱՆ
20 ԿՐՊ.

2013

